ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել օրակարգը

1.ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ , ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ , ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -3 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

11/24/2015

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 35

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով `

Ավագանին որոշեց

Նոր Կյուրին համայնքի վարչական տարածքում 2016 թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ/ սույն կետի <ա> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1.000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

բգ/ 1001ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեվտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.000 դրամ

գ/ խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60.000 դրամ :

գա/ համայնքի տրածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է ՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում ՝ 5000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում ՝ 1000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառ.մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ
բ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:.

10. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

11. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2.500 դրամ

12. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3.000 դրամ

13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փափախող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ

3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

11/24/2015

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 36

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ , ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ , ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել 2016 թվականի համար համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների, մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և հաստիքային դրույքաչափերը :

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
1. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը / ՀՀ դրամ /
Համայնքի ղեկավար		263.000
Համայնքային ծառայության պաշտոններ		
գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2 /	1.0	210.000
գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1 /	1.0	209.000
գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / 3.2 /	1.0	204.000
Մանկապարտեզ		

Մանկապարտեզի տնօրեն	1.0	100.000
Մանկապարտեզի դաստիարակ	1.25	102.000
Մանկապարտեզի դայակ	1.1	80.300
Մանկապարտեզի խոհարար	1.0	73.000
Մանկապարտեզի հաշվապահ	0.5	73.000
Մանկապարտեզի եր. ուսուցիչ	0.25	81.000
Սպասարկման աշխատակազմ		
Գյուղապետարանի հավաքարար		74.000
Համայնքի աղբահանող վարորդ		100.000

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ

3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

11/24/2015

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ